ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
29 դեկտեմբերի 2020թ-ին կնքված N «ՀՀՎԱ-ԳՀԱՊՁԲ-21/5-1» ծածկագրով՝
Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման
պայմանագրի

ք.Երևան «20» հունվարի 2021թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ, վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Վահան Պապիկյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մարինե Գալաջյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ կողմեր), հիմք ընդունելով «ՀՀՎԱ-ԳՀԱՊՁԲ-21/5-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը, ինչպես նաև ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

*1. Համաձայնագրի առարկան*

1.1 Հաշվի առնելով, որ 2021 թվականի համար հատկացվել են համապատասխան ֆինանսական միջոցներ, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին հաստատել Պայմանագրի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն Տեխնիկական բնութագիր-Գնման ժամանակացույցի՝ հավելված 1-ի և Վճարման ժամանակացույցի՝ հավելված 2-ի:

1.2 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում 2021թ-ի հունվարի 8-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

*2. Այլ պայմաններ*

2.1 Համաձայնագիրի պայմանները կիրառվում են մինչև Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև Համաձայնագիր կնքելը կատարողի կողմից մատակարարված ապրանքի դիմաց վճարումը իրականացվում է այդ Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.2 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.3 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.5 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

***3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները***

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| Վարչապետի աշխատակազմ | «ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ |
| ք. Երևան, Հանրապետության հրապարակ Կառավարական տուն 1 | ք.Երևան, Միքայելյան 66 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «ՀայէկոնոմԲանկ» ՓԲԸ, Մետաքս մ/ճ |
| Հ/Հ 900011022085 | Հ/Հ 163218028989 |
| ՀՎՀՀ 02505554 | ՀՎՀՀ 01283403 |
| _______________ / ստորագրություն / | _______________ / ստորագրություն / |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված թիվ 1*
*«29» դեկտեմբերի 2020թ. կնքված*
*ՀՀՎԱ-ԳՀԱՊՁԲ-21/5-1 ծածկագրով պայմանագրի*
*«20» 01 2021թ. կնքված N 1 Համաձայնագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր առավելագույն գինը/ՀՀ դրամ | ընդհանուր առավելագույն քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | հասցեն | ենթակա առավելա-գույն քանակը | Ժամկետը |
| 1 | 03121200/504 | Ծաղիկներ | 1 Ծաղիկներ՝ վարդեր. Բացառապես թարմ, բնական ծաղիկներ՝ վարդեր, տեսակը՝ հոլանդական կամ համարժեք, ծաղկի գլուխը/կոկոնը/՝ առնվազն 7 սմ տրամագծով, բարձրությունը՝ առնվազն 7 սմ, ցողունի երկարությունը՝ առնվազն 90սմ, ուղիղ, փնջավորված և փաթեթավորված՝ բարձրորակ թափանցիկ, թղթյա կամ դեկորատիվ ժապավեններով, գույնը, քանակը և փաթեթավորումը՝ ըստ պատվիրատուի կողմից ներկայացված հայտի, փնջերում ծաղիկների գույնը, քանակն ու փաթեթավորման ձևը նախօրոք համաձայնեցնել պատվիրատուի հետ: | Հատ | 987 | 1 381 800 | 1400 | ք. Երևան, համաձայն Պատվիրատուի կողմից ներկայացված պատվեր-հայտի | 1400 | 08.01.2021թ. մինչև 25.12.2021թ. |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | 03121210/503 | Ծաղկային կոմպոզիցիաներ | 3. Ծաղկային կոմպոզիցիաներ՝ ծաղկեպսակներ. Բացառապես թարմ, բնական ծաղիկներ՝ Յուրաքանչյուր պսակում 600 մեխակից ոչ պակաս, գույնը՝ սպիտակ և կարմիր (65% սպիտակ, 35% կարմիր), ծաղկի գլուխը/կոկոնը/՝ առնվազն 6 սմ տրամագծով, հավաքված ձևը՝ ուռուցիկ, առնվազն 1,2մ տրամագծով, պենոպլաստե շրջանակի վրա, հետևի ձևավորումը (հիմքը)՝ ֆետրե կտոր՝ ռուսկուսի կամ պտերի տերևներով, փայտե ոտնակների վրա հենված, փայտե ոտնակները ֆետրե կտորով պատված, բարձրությունը առնվազն 1,9մ: | Հատ | 62990 | 3 779 400 | 60 | ք. Երևան, համաձայն Պատվիրատուի կողմից ներկայացված պատվեր-հայտի | 60 | 08.01.2021թ. մինչև 25.12.2021թ. |

1. *Մատակարարումը իրականացվելու է՝ ըստ պատվիրատուի կողմից ներկայացված պատվեր-հայտի:
2. Պատվիրատուի կողմից պատվեր-հայտը ներկայացվում է մատակարարման վերջնաժամկետից առնվազն 5 ժամ առաջ:
3. Տեղափոխումը մատակարարի միջոցներով, պատվիրատուի կողմից նշված հասցեով և ժամկետում՝ /ք. Երևան/ ծաղիկների թարմությունը ապահովող հարմարեցված մեքենայով: Կոտրված ծաղիկները ենթակա են փոխարինման մատակարարի կողմից անմիջապես:

**ԳՆՈՐԴ**
Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

/ ստորագրություն /

Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ
ք.Երևան, Միքայելյան 66
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ, Մետաքս մ/ճ
Հ/Հ 163218028989
ՀՎՀՀ 01283403

/ ստորագրություն /

Հավելված թիվ 2
«29» դեկտեմբերի 2020թ. կնքված
ՀՀՎԱ-ԳՀԱՊՁԲ-21/5-1 ծածկագրով պայմանագրի
« 20 » 01 2021թ. կնքված N 1 Համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց առավելագույն վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 03121200/504 | Ծաղիկներ | 276360 | 276360 | 276360 | 621810 | 621810 | 621810 | 967260 | 967260 | 967260 | 1381800 | 1381800 | 1381800 | 1381800 |
| 3 | 03121210/503 | Ծաղկային կոմպոզիցիաներ | 755880 | 755880 | 755880 | 1700730 | 1700730 | 1700730 | 2645580 | 2645580 | 2645580 | 3779400 | 3779400 | 3779400 | 3779400 |

**ԳՆՈՐԴ**
Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

/ ստորագրություն /
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ
ք.Երևան, Միքայելյան 66
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ, Մետաքս մ/ճ
Հ/Հ 163218028989
ՀՎՀՀ 01283403

/ ստորագրություն /
Կ.Տ